

Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա. Վարդանյան



2023-2024թթ ուսումնական տարում Արմավիրի մարզի  
Մրգաշատի Վ. Ափոյանի անվան թիվ 1 միջնակարգ  
դպրոցում կայացած Քիմիա առարկայի նախագծի  
հաշվետվություն

Թեմա՝ «Խնդրագրքի ստեղծում»

նախագծի ղեկավար՝ Լ.Պետրոսյան

Քիմիա առարկայից նախագծային աշխատանքը անցկացվել է 7-րդ դասարանում՝ «Խնդրագրի ստեղծում» թեմայով:

Ուսումնական նախագծին մասնակցել են ութ սովորողներ՝ հինգ տղա և երեք աղջիկ:

### Նախագծի նպատակը

Աշակերտների մոտ զարգացնել թիմով աշխատելու կարողությունը, համակարգչային գիտելիքները, հարստացնել նրանց բառապաշարը, ինչպես նաև խնդիրներ և վարժություններ կազմելու հմտությունը:

### Նախագծի վերջնարդյունքները

Նախագծի նպատակին հասնելու համար աշակերտը պետք է կարողանա.

1. կազմել իրենց թեմաներին համապատասխան խնդիրներ և վարժություններ

2. Հավաքագրել դրանք համակարգչով

3. Լուծել իրենց կազմած խնդիրներն ու վարժությունները

### Կարողականություն

Նախագծի ընթացքում սովորողները ձեռք են բերել հետևյալ կարողունականությունները

-Սովորել սովորելու կարողականություն

-Լեզվական գրագիտության կարողունակություն

-Թվային և մեդիա կարողունակություն

-Ինքնաձևաչափական և սոցիալական կարողունակություն

-Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն

### Նախագծի ընդհանուր բնութագիրը

Նախագծի համար նախատեսված է 5 ժամ՝ շաբաթը մեկ անգամ, յուրաքանչյուր ուրբաթ օրը 15:00-15:45

1-ին շաբաթ՝ 06/10/2023թ -գրույց նախագծային աշխատանքի մասին:Կարևորելով քիմիայի դերը մարդու կյանքում՝ քննարկել ենք հարցեր,որոնք վերաբերում էին քիմիայի հիմնախնդիրներին:

Մեջբերել ենք թևավոր խոսքեր հայտնի գիտնականներից:

2-րդ շաբաթ՝ 13/11/2023թ-Քննարկվել են մեր կողմից կազմված վարժությունները, մշակվել և սկսվել է հավաքագրումը: Հավաքագրմանը մասնակցել են Գագիկը, Լիան, Ցողիկը և Սուսաննան:

Առաջին մասը՝ Նյութերի և երևույթների ճանաչում

Ընդհանուր 32 հարց

Ցողիկ-8                    Հովնան-3

Գագիկ-7                    Ալեքս-1

Սուսաննա-6                Արսեն-1

Լիա-5                        Նարեկ-1

3-րդ շաբաթ՝ 20/11/2023թ- Շարունակել ենք հավաքագրումը:

Հանձնարարվել է կազմել հարցեր հաջորդ գլխի վերաբերյալ՝

Քիմիայի հիմնական հասկացությունները

Հավելյալ քննարկել ենք հարցեր կապված ատոմի, դրա կառուցվածքի, քիմիական տարրերի, դրանց նշանների հետ կապված:

4-րդ շաբաթ՝ 03/11/2023թ- Քննարկել ենք կազմված հարցերը, մշակել և նորից սկսել հավաքագրումը: Գիրքն ուղակվել է տպագրման: Այն կազմված է 11 էջից:

Քանի որ, երկրորդ գլուխը չհասցրեցինք ամբողջությամբ անցնել, այդ իսկ պատճառով մեր գրքի երկրորդ մասը պարունակում է 15 հարց:

Ցողիկ-3                    Արսեն-1

Գագիկ-3                    Հովնան-1

Սուսաննա-2                Նարեկ-1

Լիա-2                        Ալեքս-1

5-րդ շաբաթ՝ 10/11/2023թ-Նախագծի հանձնում

Նախագծի ներկայացումից հետո կատարվեց գնահատում՝

Գնահատել 20 միավորանոց համակարգով

Ընթացքը – 6 միավոր, ընդ որում՝



- նախապատրաստական փուլ (թեմայի ընտրություն, նպատակի սահմանում, դերերի բաշխում՝ եթե խմբային է) – 1 միավոր
- բուն ընթացք (խնդիրների ձևակերպում, հարցերի մշակում, պլանի կազմում, ժամանակի բաշխում, ռազմավարությունների ընտրություն, աղբյուրների ուսումնասիրում, տեղեկության հավաքագրում և վերլուծություն) – 4 միավոր
- ավարտ կամ ամփոփում (վերջնական մշակում, աշխատանքի ձևավորում) – 1 միավոր
- Բովանդակությունը – 8 միավոր, ընդ որում՝
  - համապատասխանությունը թեմային – 3 միավոր
  - ամբողջականությունը – 2 միավոր
  - հիմնավորվածությունը – 2 միավոր
  - գրագիտությունը – 1 միավոր
- Ներկայացումը – 6 միավոր, ընդ որում՝
  - ձևը/միջոցը (սահիկաշար, ֆիլմ-հոլովակ, երաժշտություն, համերգ, նկար, պաստառ, գրքույկ, բեմականացում և այլն) – 3 միավոր
  - խոսքը – 3 միավոր

Աշակերտներ	Ընթացք ը (6միավ որ)	Բովանդա կությունը (8 միավոր)	Ներկայ ացումը (6 միավոր )	Ընդհանուր միավոր (20)
1.Աբրահամյան Գագիկ	5	8	5	18
2.Ալեքսանյան Արսեն	2	5	2	9
3.Իսպիրյան Ալեքս	2	5	3	10

4.Հովհաննիսյան Նարեկ	2	5	2	9
5.Մաղաքյան Հովնան	3	6	4	13
6.Սարգսյան Լիա	5	7	5	17
7.Սարգսյան Յողիկ	5	8	5	18
8.Սերոբյան Սուսաննա	5	7	5	17